ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-23-9/2-9 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 12.04.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Փոթոյանի, որը գործում է «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, հիմք ընդունելով 10.02.2023թ. կնքված №ԳՀԱՊՁԲ-23-9/2-9 գնման պայմանագրի, այսուհետ՝ «Պայմանագիր», 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը, այսուհետ՝ «Համաձայնագիր», հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն № 1 և № 2 Հավելվածների:

1.1.1 Պայմանագրի 6.3 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու կամ չմատակարելու դեպքում:

1.2 Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, Համաձայնագրով նախատեսված ծավալներով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք)՝ համաձայն Համաձայնագրի № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի № 2 Հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***5 948 500(հինգ միլիոն ինը հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*** Գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Համաձայնագրի գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով սահմանված կարգով, բայց ոչ ուշ, քան մինչև 11.12.2023թ.:

3. Այլ պայմաններ

3.1 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ ապրանքների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում՝ ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ԱԷՄՋԻ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, ք.Երևան, Արովյան փ./23 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 19300406500200 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02863111 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | տնօրեն |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Է. ՓՈԹՈՅԱՆ |

Հավելված N 1
№ ԳՀԱՊՁԲ-23-9/2-9 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման առարկայի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | CPV անվանումը | անվանումը | չ/մ | քանակը | միավորի գինը (ՀՀ դրամ) | ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | մատակարարման ժամկետը 2023թ. 2-րդ եռամսյակ |
| 3 | դիկլոֆենակ d11ax18, m01ab05, m02aa15, s01bc03 | դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում), diclofenac (diclofenac sodium) | հատ | 23,000 | 79 | 1,817,000 | 23,000 |
| 10 | տոլպերիզոնի հիդրոքլորիդ M03BX04 | տոլպերիզոնի հիդրոքլորիդ, tolperisone hydrochloride | հատ | 1,300 | 107 | 139,100 | 1,300 |
| 20 | ազիթրոմիցին j01fa10, s01aa26 | ազիթրոմիցին, azithromycin | հատ | 4,000 | 290 | 1,160,000 | 4,000 |
| 21 | կլարիթրոմիցին j01fa09 | կլարիթրոմիցին clarithromycin | հատ | 5,700 | 329 | 1,875,300 | 5,700 |
| 36 | կատաղության դեմ պատվաստանյութ j07bg | Կատաղության վիրուսի սպեցիֆիկ անտիգեն | հատ | 80 | 5699 | 455,920 | 80 |
| 43 | ացետիլսալիցիլաթթու a01ad05, b01ac06, n02ba01 | ացետիլսալիցիլա-թթու, acetylsalicylic acid | հատ | 2,200 | 46.9 | 103,180 | 2,200 |
| 56 | ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ) R05CB06, R05CB | ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ)ambroxol (ambroxol hydrochloride) | հատ | 20,000 | 19.9 | 398,000 | 20,000 |

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | «ԱԷՄՋԻ» ՍՊԸ տնօրեն |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Է. ՓՈԹՈՅԱՆ |

«ԱԷՄՋԻ» «АЕМДЖИ» «AMG» 02863111

Հավելված N 2
№ ԳՀԱՊՁԲ-23-9/2-9 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | | | | |
|---|---|---|---|---|---|
| չ/հ | CPV կոդը | CPV անվանումը | նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2023թ. պետական բյուջեից ըստ եռամսյակների՝ ընդ որում | | |
| | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 11.12.2023թ. |
| 3 | 33631310/503 | դիկլոֆենակ d11ax18, m01ab05, m02aa15, s01bc03 | 1,817,000 | 1,817,000 | 1,817,000 |
| 10 | 33631380/501 | տոլպերիզոնի հիդրոքլորիդ M03BX04 | 139,100 | 139,100 | 139,100 |
| 20 | 33651125/501 | ազիթրոմիցին j01fa10, s01aa26 | 1,160,000 | 1,160,000 | 1,160,000 |
| 21 | 33651129/501 | կլարիթրոմիցին j01fa09 | 1,875,300 | 1,875,300 | 1,875,300 |
| 36 | 33651199/501 | կատաղության դեմ պատվաստանյութ j07bg | 455,920 | 455,920 | 455,920 |
| 43 | 33661121/501 | ացետիլսալիցիլաթթու a01ad05, b01ac06, n02ba01 | 103,180 | 103,180 | 103,180 |
| 56 | 33671125/501 | ամբրօքսոլ (ամբրօքսոլի հիդրոքլորիդ) R05CB06, R05CB | 398,000 | 398,000 | 398,000 |
| Ընդամենը՝ | | | | | 5,948,500 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ԱԵՄՋԻ» ՍՊԸ տնօրեն

Է. ՓՈԹՈՅԱՆ